

ԱԶԴԱՐԱՐ

ՏԵՂԵԿԱՏՈՒ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՀԱՅՈՑ ԲՈՒԷՅԹԻ ԵՒ ՇՐՋԱԿԱՅԻՑ ՀԱՅՈՑ ԹԵՄԻՆ

P.O.Box: 8157, Salmiyeh 22052- Kuwait. Tel: 965-25614392, Fax: 965-25638312, e-mail: prelacy@armenianprelacykw.org

ՆՈՐ ՇՐՋԱՆ, Ը. Տարի, Թիւ 334, Ուրբաթ, 20 ՄԱՅԻՍ, 2016

ՀԱՅԿԱԿԱՆ

Կիրո Մանոյեան Մեծ Յոյսեր Չունի Հետաքննական Մեքանիզմներուն Առնչուած

ՀՅԴ Բիւրոյի անդամ, ՀՅԴ Բիւրոյի Հայ դատի եւ քաղաքական հարցերու գրասենեակի պատասխանատու Կիրո Մանոյեան ըսած է, որ Հայաստանի նախագահը ճիշդ ըրաւ արագ կերպով լուսաբանելով հանդիպման մանրամասնութիւնները (Վիեննայէն վերադարձի ճամբուն վրայ նախագահին տուած հարցազրոյցը օդանաւին մէջ), որովհետեւ այդպիսով առնուազն մեր հասարակութեան համար որոշ խնդիրներ պարզ դարձան:

«Երբ համանախագահողներու յայտարարութիւնն ալ համահունչ էր մեր նախագահի ըսածներուն, արդէն ցոյց տուաւ, որ իրականութեան մէջ ի՛նչ ձեւով ընթացած են այդ բանակցութիւնները: Ազրպէյճանի կողմէ լռութիւնը կը խօսի այն մասին, որ անոնք այդքան ալ խանդավառ չեն այդ հանդիպումով, եւ համանախագահները կը փորձեն սիրաշահել Ազրպէյճանը եւ սեղանի շուրջ պահել՝ փորձելով նաեւ ըսել բաներ, որոնք Ազրպէյճանի ցանկութիւնն են: Հայկական կողմը փուլային բանակցութիւններուն դէմ չէ, եթէ փուլայինի ընթացքին ճանչցուի Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան անկախութիւնը եւ այլն, բայց այդպէս չէ հարցը. այս առաջարկներուն շուրջ փուլայինը իսկապէս պէտք է անընդունելի ըլլայ: Իսկ եթէ ատիկա մէկ կողմ դնենք եւ նայինք, որ ասիկա իրականութեան մէջ փաթեթային լուծում է, եւ կիրարկումը պէտք է ըլլար փուլային, այդ պարագային նոյնպէս անընդունելի կ'էտեր կան: Օրինակ՝ երբ կ'ըսեն ազատագրուած տարածքներ, արդէն անընդունելի է, որովհետեւ ամբողջ Արցախը ազատագրուած է», ըսած է Մանոյեան:

Ըստ անոր, կարելի չէ անհաւասար փոխզիջումներ ընել, որովհետեւ եթէ փոխզիջման խնդիր է, պէտք է համահաւասար ըլլայ:

Մանոյեան նշած է նաեւ, որ, առանց Լեռնային Ղարաբաղի մասնակցութեան, ճիշդ չէ ակնկալել, որ արդիւնքի կարելի ըլլայ հասնիլ:

Խօսելով Վիեննայի մէջ ձեռքբերուած՝ հետաքննական մեքանիզմներու տեղադրման մասին՝ ան ըսած է. «Հետաքննական մեքանիզմները պէտք է յստակ ճշդուին, մինչեւ հիմա ճշդուած չեն: Կողմերը պէտք է պայմանաւորուին, թէ ի՛նչ յստակ հետաքննական մեքանիզմներ պիտի ըլլան: Վերջերս ուսումնասիրած եմ դիտորդական նման առաքելութիւններու առօրեայ գեկուցումները Ուքրանիոյ պարագային եւ հասկցած, որ հասցեականացուած են այնքանով, որ կ'ըսեն՝ այս կողմէն կրակ եկաւ, բայց որակումներ չեն տար: Ակնկալել, որ պէտք է դատաւորի նման յայտարարեն՝ դուն մեղաւոր ես, եւ մենք պէտք է գնդակահարենք բոլորը, այդպիսի բան չ'ըլլար»:

Մանոյեան նշած է նաեւ, որ պէտք է պարզել՝ հետաքննական մեքանիզմները ճիշդ ի՛նչ են՝ մարդի՞կ, թէ՞ սարքեր:

Նալբանդեան. «Յոյսով ենք՝ Այս Անգամ Ագրպէճանը Չի Խորտակեր Միջազգային Հանրութեան Սպասելիքները»

Հայաստանի արտաքին գործոց նախարար Էդուարդ Նալբանդեան 18 Մայիսին Սոֆիայի մէջ ելոյթ ունենալով Եւրոպական խորհուրդի նախարարներու կոմիտէի 126-րդ նիստին, յայտարարած է, որ Հայաստան կը կիսէ Եւրոպական խորհուրդի ընդհանուր քարտուղար Թորպիոն Եակլանտի տեսակէտը «Ժողովրդավարական անվտանգութեան» հայեցակարգին վերաբերեալ, ըստ որուն, ժողովրդավար երկիրներու պարագային քիչ հաւանականութիւն կայ, որ պատերազմի սկսին: «Ակնյայտ է, որ մենատիրական վարչակարգերը նման երկրներանքի առջեւ չեն», ըսած է Նալբանդեան՝ ընդգծելով. «Նման իրավիճակի ականատեսը դարձանք այս տարուան ապրիլի սկիզբը, երբ Ագրպէճանը Լեռնային Ղարաբաղի դէմ սկսաւ լայնածաւալ զինուորական գործողութիւններ, որոնց պատճառով բազմաթիւ զոհեր եւ վիրաւորներ եղան, տեղի ունեցան միջազգային մարդասիրական իրաւունքի եւ մարդու իրաւունքներու կոպտագոյն խախտումներ»:

Ան տեղեկացուցած է, որ ապրիլի սկիզբը ստեղծուած լարուած իրավիճակը եւ անկէ դուրս գալու ուղիները երկու օր առաջ Վիեննայի մէջ քննարկուած են Հայաստանի եւ Ագրպէճանի նախագահներուն միջեւ տեղի ունեցած հանդիպումին ընթացքին, որուն ներկայ եղած են Ռուսիոյ եւ Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարները եւ Ֆրանսայի՝ Եւրոպական հարցերով պաշտօնատարը, որոնք կը ներկայացնէին ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի համանախագահող երկիրները:

«Իրենց միացեալ յայտարարութեան մէջ համանախագահող երկիրները շեշտեցին 1994-1995-ի զինադադարի մասին համաձայնագիրներու անշեղ իրագործման անհրաժեշտութիւնը: Համաձայնութիւն ձեռք բերուեցաւ քայլեր ձեռնարկելու անոնց իրականացման մշտադիտարկման եւ դէպքերու հետաքննութեան մեքանիզմի ներդրման, ԵԱՀԿ-ի գործող նախագահի անձնական ներկայացուցիչի խմբակի կարողութիւններու յաւելման վերաբերեալ: Այս ամէնը կրնայ ճամբայ հարթել տագնապի լուծման բանակցային գործընթացը վերսկսելու համար», յայտնած է նախարարը:

Իր խօսքը եզրափակելով՝ Էդուարդ Նալբանդեան ըսած է. «Մինչեւ այսօր Ագրպէճանը շարունակաբար խափանած է ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի համանախագահ երկիրներու նման առաջարկները եւ նոյնիսկ ձեռքբերուած պայմանաւորութիւնները: Յոյսով ենք, որ այս անգամ Ագրպէճանը չի խորտակեր համանախագահ երկիրներուն յոյսերը, միջազգային հանրութեան սպասելիքները»:

Բակո Սահակեան Հրանդ Մարգարեանի Հետ Քննարկած Է Լեռնային Ղարաբաղի Տագնապը

Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան նախագահ Բակո Սահակեան 18 Մայիսին ընդունած է ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ Հրանդ Մարգարեանը:

Լեռնային Ղարաբաղի նախագահի մամլոյ գրասենեակէն յայտնած են, որ հանդիպումին, որուն կը մասնակցէր ՀՅԴ Արցախի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ Դաւիթ Իշխանեան, քննարկուած են ագրպէճանական-ղարաբաղեան տագնապի լուծման, շրջանային զարգացումներուն եւ ներհայկական գործընթացներուն վերաբերող հարցեր:

Ագրպեյճան Ետդարձ Կատարած Է Վիեննայի Մէջ Քասփրչիքի Գրասենեակին Առնչութեամբ Գոյացած Համաձայնութենէն

Ագրպեյճանի նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալ, արտաքին կապերու բաժանմունքի ղեկավար Նովրուզ Մամետով ագրպեյճանական «Էյ.Էն.Էս.» գործակալութեան տուած մեկնաբանութեան մէջ ըսած է, որ Պաքու դէմ է ԵԱՀԿ-ի գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անճէյ Քասփրչիքի գրասենեակի լիազօրութիւններու յաւելման:



Մեկնաբանելով ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի յայտարարութիւնը՝ ան ըսած է. «Անճէյ Քասփրչիքի լիազօրութիւններուն մէջ առարկայական փոփոխութիւններ չեն կրնար ըլլալ: Յայտարարութեան մէջ ըսուածը Մինսքի խմբակի դիրքորոշումն է, մենք այս հարցին մէջ մեր վրայ որեւէ պատասխանատուութիւն չենք վերցուցած»:

«Մարգսեան-Ալիեւ Հանդիպումը Ճիշդ Ուղղութեամբ Կատարուած Քայլ Էր» Կ'ըսէ Քըրպի



Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարութեան բանբեր Ճոն Քըրպի անդրադարձած է Լեռնային Ղարաբաղի տագնապի լուծման՝ պատասխանելով լրագրողներու շարք մը հարցումներուն:

Մեկնաբանելով 16 Մայիսին Վիեննայի մէջ Հայաստանի եւ Ագրպեյճանի նախագահներու միջեւ տեղի ունեցած հանդիպումը՝ Քըրպի նշած է, որ երկու

երկիրներուն նախագահներն ալ պարտաւորուած են յարգել զինադադարը, ջանքեր գործադրել փոխադարձ վստահութեան հաստատման համար, ինչպէս նաեւ յաջորդ ամիս վերսկսիլ բանակցութիւններուն՝ տագնապին համապարփակ լուծում գտնելու համար:

«Անոնք դրսեւորեցին քաղաքական կամք՝ սթաթիւս քոյի շրջանակներէն դուրս գալու եւ շրջանի ամբողջ բնակչութեան համար օգտակար քայլերու դիմելու համար: Իսկ Միացեալ Նահանգներն ալ իրենց կարգին պատրաստակամ են այս հարցին մէջ աջակցելու կողմէրուն: Այլ խօսքով՝ ասիկա շատ դրական հանդիպում էր եւ ճիշդ ուղղութեամբ կատարուած քայլ: Այժմ բոլորը պէտք է ջանասիրաբար աշխատին՝ իրենց ստանձնած պարտաւորութիւնները կեանքի կոչելու համար», ըսած է Քըրպի:

Ապա լրագրողներէն մէկը՝ դիմելով Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարի բանբերին, յիշեցուցած է, որ Հայաստանն ու Լեռնային Ղարաբաղը պատրաստակամ են հակամարտ զօրքերու շփման գիծին երկայնքով կրակոցի աղբիւրի ճշդման համակարգերու տեղադրման, մինչդեռ Ագրպեյճան մերժած է այդ առաջարկը: Երբ լրագրողը խնդրած է Քըրպիին մեկնաբանել Պաքուի այդ դիրքորոշումը՝ ամերիկացի պաշտօնատարը մերժած է այդ առնչութեամբ որեւէ բան ըսել:

«Եթե Ազրպեյճանցիները դրժեն խոստումները, Մենք Համարժեք Կը Պատասխանենք» Ըսաւ Նախագահ Սարգսեան

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեան Վիեննայէն Երեւան վերադառնալու ճամբուն վրայ օդանաւին մէջ իրեն ընկերակցող լրագրողներուն հետ զրուցելով խօսած է ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի համանախագահող երկիրներուն նախաձեռնութեամբ Ազրպեյճանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ տեղի ունեցած հանդիպումին մասին:



«Մենք պատրաստ ենք որեւէ ելքի, բայց մեր ցանկութիւնն է, որ այդ ելքը ըլլայ խաղաղ ճամբան: Մեր նպատակն է, որ մեր խնդիրները լուծենք խաղաղ ճամբով, բանակցութիւններով, բայց եթէ ազրպեյճանցիները դրժեն իրենց խոստումները, խախտեն զինադադարի պայմանները, մենք այլ ելք պիտի չունենանք, քան համարժեք պատասխանելը, իրականութիւնը այս է: Յոյսով ենք, որ խախտումները քիչ ըլլան: Ես չեմ կարծեր, որ

վաղուրնէ խախտումները կը բացառուին, բայց յոյս ունիմ, որ հանդարտ կ'ըլլայ: Եթէ ազրպեյճանցիները դրժեն իրենց խոստումները, խախտեն զինադադարի պայմանները, մենք այլ ելք պիտի չունենանք, քան համարժեք պատասխանելը, իրականութիւնը այս է», շեշտած է նախագահը:

Հանդիպումը բարարար նկատելով՝ նախագահ Սարգսեան յայտնած է, որ պէտք էր պարզաբանել, որ բանակցութիւնները արդէօք վերջնական փակուղի՞ մտած են: «Մեր նպատակն էր պարզել, թէ իրականութեան մէջ բանակցութիւնները մտած են փակուղի եւ այլ ելք չկայ, քան պատերազմիլը, թէ՛, այնուամենայնիւ, մենք կրնանք խնդիրը լուծել քիչ կորուստներով: Ընդհանուր առմամբ, ես եւ իմ գործընկերներս բարարարուած ենք հանդիպումին արդիւնքներով:

«Մանրամասնութիւններուն անդրադառնալու անհրաժեշտութիւն չկայ՝ մեկնելով քանի մը հանգամանքներէ: Այդուհանդերձ, Ազրպեյճանի նախագահը վստահեցուց, որ իր երկիրը եւ ինք անձամբ նպատակ չունին պատերազմական գործողութիւններով հասնելու տազնապի լուծման», ըսած է նախագահը՝ ընդգծելով, որ ատիկա թէւ լաւ է, սակայն մեծ հաւատք չի ներշնչեր: Արդարեւ, նման խօսակցութիւններ բազմիցս եղած են, սակայն քանի մը տարի է, որ համաձայնութիւնները չեն յարգուիր: «Մենք իրաւունք չունինք միայն մեր կանխատեսումներով առաջնորդուելու, որովհետեւ պատերազմը լաւագոյն լուծումը չէ, ուստի կը տեսնենք, թէ իրադարձութիւնները ինչպէ՛ս կը զարգանան: Բոլոր պարագաներուն մենք պատրաստ ենք որեւէ ելքի, վստահաբար, մեր ցանկութիւնն է, որ այդ ելքը ըլլայ խաղաղ ճամբան», նշած է Սերժ Սարգսեան:

Անոր համաձայն, զրուցած են այն մասին, որ որոշ ժամանակ ետք ճիշդ պիտի ըլլայ հանդիպում ունենալ: Հայաստան հանդէս եկած է կառուցողական առաջարկով. ուստի, նկատի ունենալով, որ խօսուած է զինադադարի դրութիւնը պահպանելու ուղղութեամբ համանախագահներուն կողմէ դիտարկման դրութեան հաստատման մասին, ապա Հայաստան առաջարկած է, որ ատիկա հաստատուի մինչեւ յաջորդ հանդիպումը: Սերժ Սարգսեանի համաձայն, ատիկա պիտի ըլլայ կողմերուն դրսեւորած կառուցողական մօտեցումը:

Օդանաւին մէջ եղած գրոյցին ընթացքին անդրադարձ կատարուած է նաեւ հայկական զինուած ուժերուն, նաեւ հողային կորուստներուն մասին շրջան ընող տեղեկութիւններուն: Նախագահը շեշտած է, որ հայկական զինուած ուժերը իրենց առջեւ դրուած խնդիրները կը կատարեն:

«Յաղթանակը կամ պարտութիւնը կախեալ է անկէ, թէ դուն ի՛նչ նպատակ դրած ես եւ արդեօք կրցած ես հասնիլ քու նպատակիդ: Այստեղ ես չեմ ուզեր, որ մենք յետին թիւով եզրակացութիւններ կատարենք, կուրծք ծեծենք եւ ըսենք՝ մենք յաղթած ենք: Կրնաք հարցնել պաշտպանութեան նախարարութեան ամբողջ սպայակազմին, անոնց որոնց հետ ես հանդիպած եմ, կրնաք հարցնել մեր Անվտանգութեան խորհուրդի բոլոր անդամներուն, թէ ես ինչպէ՛ս կը տեսնէի իրադարձութիւններու զարգացումը տակաւին տարիներ առաջ եւ ի՛նչ տեղի ունեցաւ: Ես յստակ հարց դրած եմ մեր զինուած ուժերուն, անվտանգութեան համակարգին առջեւ, թոյլ չտալ ճակատի ճեղքում ու քայքայում: Այսինքն՝ ձախողեցնել հակառակորդի ծրագիրները: Կը կարծեմ՝ բոլորդ ալ համոզուած էք, որ ծրագիրները ձախողեցան», ըսած է Հայաստանի նախագահը:



Մերժ Սարգսեանի համաձայն, միշտ կարելի է ժողովրդահաճոյ յայտարարութիւններ կատարել եւ ըսել, որ՝ եթէ ինծի թոյլատրէին, ապա ես կ'երթայի աւելի առջեւ: Ըստ անոր, նման բաներ կ'ըսեն այնպիսի անձեր, որոնք իրենց կեանքին մէջ վառօղի հոտ չեն զգացած, մարդիկ, որոնք շատ հեռու են զինուորական գործէն: «Մեզի յաւերժ պատերազմ պէտք չէ: Մեզի պէտք չեն զինուած ուժեր, որոնք կ'երթան արկածախնդրութեան: Մեզի պէտք են զինուած ուժեր, որոնք վստահաբար կը կատարեն իրենց առջեւ դրուած խնդիրները: Բոլոր անոնք, որոնք կը փորձեն

խնդիրներ, թերութիւններ գտնել, գործին չեն աջակցիր: Անոնց նպատակը իրենց կատարած անպատասխանատու յայտարարութիւնները իրականութեան մօտ բերելն է», նշած է նախագահը:

Ան անդրադարձած է նաեւ տարածքներու կորուստին մասին խօսակցութիւններուն: «Գոյութիւն ունի քարտէս, գոյութիւն ունին պարզ հաշիւներ, բացի անկէ՝ գոյութիւն ունի գնահատական: Ինչ որ բան կորսնցուցած ես, բայց այդ բանը ի՛նչ նշանակութիւն ունի մարտավարական, ռազմավարական, հոգեբանական տեսանկիւնէն: Նախ եթէ զուտ մեթոքով չափենք, ապա պէտք է ըսեմ հետեւեալը. հայկական ուժերը, իբրեւ անվտանգութեան գօտի, ունէին 800 հազար հեկտար, կորսնցուցած են 800 հեկտար: Մէկ հազարերորդն ալ չկայ: Ռազմավարական կամ մարտավարական առումով այդ տարածքները որեւէ նշանակութիւն չունին, զուտ հոգեբանական առումով, այդ՝ ազրպէյճանցիները կրնան իրենց ժողովուրդին համոզել, որ ինչ որ արդիւնքի մը հասած են: Բայց կ'ուզեմ համեմատութիւն մը կատարել: 800 հեկտար, եւ իւրաքանչիւր հեկտարի համար՝ մէկ զոհ, երկու վիրաւոր, ենթադրենք, ճիշդ թիւերը իրենք գիտեն: Բայց նոյնիսկ, եթէ կէս զոհ, մէկ վիրաւոր, նորէն շատ է: Համեմատեցէք եւ տեսէք, այդ 800 հազար հեկտարը գրաւելու համար ինչքա՛ն զոհ պիտի տային: Երբ ես կ'ըսեմ, որ մեր զինուած ուժերը իրենց խնդիրը կատարեցին, հաւատացէք՝ մեր զինուած ուժերը ի վիճակի էին սթաթիս քոն վերականգնել, ընտրութեան խնդիր էր: Արդեօ՞ք կ'արժէ այդ 800 հեկտարին համար զոհել եւս 35, 40 կամ 80 հայրենասէր տղաներ, որոնց կարիքը տակաւին շատ պիտի ունենանք», դիտել տուած է նախագահը:

www.armenianprelacykw.com

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

«Մենք Առանձին Պատրաստ Ենք Պայքարելու ՏԱՀԵՇ-ի Դեմ» Կ'ըսե էրտոդան

«Քորրեսպոնտընը» կը հաղորդէ, որ Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայիփ Էրտոդան յայտարարած է, որ Թուրքիան պատրաստ է առանձին Սուրիոյ եւ Իրաքի մէջ պայքարելու ՏԱՀԵՇ-ի դեմ՝ Քիլիս քաղաքի մնայուն ուժակոծումներուն պատճառով:



«Մենք պիտի յաղթենք ՏԱՀԵՇ-ին: Մենք առանձին պիտի լուծենք այդ խնդիրը, եթէ օգնութիւն չստանանք, որ արգիլենք Քիլիսի ուղղութեամբ ընթացող հրթիռային հարուածները», յայտարարած է Էրտոդան՝ Պոլսոյ մէջ միջազգային հանդիպումի մը ընթացքին:

Չաուշօղլու Պատրաստ է Հրաժարելու, Եթէ Ապացուցուի ՏԱՀԵՇ-ի Հետ Անգարայի Կապը

«ՌԻԱ Նովոսթի» կը հաղորդէ, որ Ռուսիոյ արտաքին գործոց նախարարութեան բանբեր Մարիա Չախարովա, ի պատասխան Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Մելվոք Չաուշօղլուի այն յայտարարութեան, որ պատրաստ է հրաժարելու, եթէ ապացուցուին ՏԱՀԵՇ-ի հետ Անգարայի կապերը, յայտարարած է, որ Չաուշօղլուն պէտք էր հրաժարէր թրքական օդուժին կողմէ Սուրիոյ վերեւ թռիչք կատարող ռուսական ուժաձիգին վար առնուելէն անմիջապէս ետք:

Չախարովա Դիմատետրի իր էջին վրայ գրած է. «Ատիկա պէտք էր կատարել անմիջապէս Թուրքիոյ կողմէ ռուսական օդանաւին վար առնուելէն ետք: Իսկ ՏԱՀԵՇ-ի հետ կապերու համար ոչ թէ հրաժարականի կը դիմեն, այլ՝ բանտ»:

Ըստ «Անաստուլու» լրատու գործակալութեան, Չաուշօղլու հրաժարականի մասին յայտարարած էր ի պատասխան Վիեննայի մէջ Սուրիոյ աջակցութեան խումբի նիստին ընթացքին կազմակերպուած մամլոյ ասուլիսին Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Սերկէյ Լաւրովի՝ Անգարայի կողմէ ՏԱՀԵՇ-ին զինուորական աջակցութիւն ցուցաբերելու մասին յայտարարութեան:

Ան Վիեննայի մէջ յայտարարած է, որ «կան բազմաթիւ գործօններ, որոնք կը խօսին ահաբեկչական խմբաւորման կողմէ վերահսկուող թուրք-սուրիական 90 քիլոմէթր հատուածով ՏԱՀԵՇ-ի մատակարարման համար Թուրքիոյ կողմէ ստեղծուած շատ լուրջ ցանցի մը մասին»:

Չաուշօղլու պատասխանած է. «Եթէ Ռուսիան Թուրքիոյ կողմէ ՏԱՀԵՇ-ին աջակցելու գոնէ մէկ ապացոյց ունի, ապա ես պատրաստ եմ հրաժարական տալու»:

Ան յիշեցուցած է Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայիփ Էրտոդանի խօսքերը, որոնց ընդմէջէն ան ակելի կանուխ բազմիցս ժխտած էր ՏԱՀԵՇ-ի հետ Անգարայի կապերուն վերաբերող տեղեկատուութիւնը, եւ նաեւ յայտարարած էր հրաժարական տալու պատրաստակամութեան մասին, եթէ այդպիսի կապը ապացուցուի:

Եւրոպական Յանձնաժողովը Կը Յայտարարէ Թուրքիոյ Հետ Առանց Մուտքի Արտօնագիրի Դրութեան Հաստատումը Պիտի Մեծցնէ Եւրոպական Միութեան Մէջ Ահաբեկչական Գործողութիւններու Վտանգը

ԹԱՍՍ լրատու գործակալութիւնը կը հաղորդէ, որ յունական կղզիներէն թրքական տարածք գաղթականներ ուղարկելու վերաբերեալ Անգարայի հետ կնքուած գործարքին իբրեւ արդիւնք Պրիւքսէլի կողմէ Թուրքիոյ հետ առանց մուտքի արտօնագիրի դրութեան հաստատումը պիտի մեծցնէ Եւրոպական Միութեան մէջ ահաբեկչական գործողութիւններու վտանգը:



Այս մասին ըսուած է Եւրոպական յանձնաժողովի զեկուցումին մէջ, որմէ 17 Մայիսին մէջբերումներ հրապարակած է բրիտանական «Տը Տէյլի Թէլէկրաֆ» օրաթերթը:

«Կարելի է սպասել, որ այն բանէն ետք, երբ Թուրքիոյ քաղաքացիները Եւրոպական Միութիւն առանց մուտքի արտօնագիրի մուտք գործելու իրաւունք ստանան, օտարերկրացիները պիտի սկսին թրքական անձնագիրներ ստանալու փորձերու ձեռնարկել, որպէսզի Թուրքիոյ քաղաքացիներու անուան տակ Եւրոպական Միութիւն հասնին առանց մուտքի արտօնագիրներու... Այդպիսի կարելիութիւն կրնայ գրաւել ոչ միայն անօրինական գաղթականներուն, այլ նաեւ յանցագործներուն ու ահաբեկիչներուն ուշադրութիւնը», նշուած է Եւրոպական յանձնաժողովի զեկուցումին մէջ:

Բրիտանական օրաթերթին տուեալներով՝ զեկուցումին մէջ նաեւ ըսուած է, որ գործարքին շնորհիւ «թրքական մաֆիան, որ կը զբաղի Եւրոպա մեծ ծաւալի թմրեցուցիչներու, սեռային ստրկուհիներու, ապօրէն զէնքի եւ տեղահանուածներու փոխադրութիւններով, կրնայ ընդլայնել իր ազդեցութիւնը Եւրոպայի մէջ»:

Ազրպէյճան, Վրաստան Եւ Թուրքիան Որոշած Են Միասին Ապահովել Քարիւղի Խողովակաշարի Անվտանգութիւնը

«Արմէնփրես» կը հաղորդէ, որ Թուրքիոյ պաշտպանութեան նախարար Իսմէթ Եըլլմազ կիրակի, 15 Մայիսին ազրպէյճանական Կապալա (Կուտկաշէն) քաղաքին մէջ երեք երկիրներու՝ Ազրպէյճանի, Թուրքիոյ եւ Վրաստանի պաշտպանութեան նախարարներուն միջեւ տեղի ունեցած հանդիպումէն ետք յայտարարած է, որ երեք երկիրները համաձայնած են միասնաբար ապահովել քարիւղի եւ կազի խողովակաշարերու անվտանգութիւնը: Եըլլմազ հանդիպումէն ետք կազմակերպուած մամլոյ ասուլիսի մը ընթացքին յայտնած է. «Երեք երկիրներու նախարարները քննարկած են քարիւղային եւ կազային խողովակաշարերու անվտանգութիւնը միասնաբար ապահովելու հարցը, եւ աստոր մասին համաձայնութիւն ձեռք բերուած է»: Կապալայի մէջ տեղի ունեցած արդէն 4-րդ հանդիպումին ժամանակ Վրաստանի, Ազրպէյճանի եւ Թուրքիոյ պաշտպանութեան նախարարները յայտարարած են, որ մտադիր են խորացնել պաշտպանութեան մարզին մէջ եռակողմանի համագործակցութիւնը:

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ

Հարցազրույց Ֆրանսահայ Գրող Արա Գրիգորեանի Հետ

Չորեքշաբթի, 18 Մայիսին, «Ազդակ»-ի «Արսեն Չաղլասեան» ժողովասենեակին մէջ տեղի ունեցաւ հարցազրույց «Քրիստափոր Միքայէլեան եւ թուրք սուլթանը՝ մեծ մարտահրաւերը» ֆրանսերէն գիրքի հեղինակ, ֆրանսահայ գրող Արա Գրիգորեանի հետ:



Հարցազրույցը վարեց «Ազդակ»-ի միջազգային լուրերու խմբագիր Վահրամ Էմմիեան:

Պատասխանելով գիրքի գաղափարի յղացման մասին հարցումին՝ Գրիգորեան յայտնեց, որ 2005-ին Ֆրանսայի հայաշատ Արֆորվիլ շրջանի ՀՅԴ խումբը իրմէ խնդրած է պատրաստել ցուցահանդէս մը՝

Քրիստափորի նահատակութեան 100-ամեակի նշման համար: Այդ աշխատանքի ընթացքին անդրադարձած է, որ մարդիկ խորքին մէջ չեն ճանչնար Քրիստափորն ու անոր շուրջ լուրջ ուսումնասիրութիւն մը չկայ: 2008-ին սկսած է լուրջ կերպով աշխատիլ ու ուսումնասիրութիւններ կատարել եւ անոր առաջին աղբիւրը եղած է ՀՅԴ Երիտասարդականի «Կայծեր» պարբերաթերթը: Գիրքին վրայ աշխատած է 6 տարի եւ զայն արարտած 2015-ին: «Ուսումնասիրելէ ետք, Քրիստափորը դարձած է իմ լաւ ընկերս», կը նշէ ան:

Գրիգորեան գիրքը գրած է ֆրանսերէնով, որպէսզի Քրիստափորը ճանչնան նաեւ օտարները եւ ոչ հայախօս ֆրանսահայերը: Գիրքը մեծ ընդունելութիւն գտած է: Ժողովուրդը, հայ թէ օտար, սկսած է ճանչնալ Քրիստափորը: Մասնաւորաբար «Փրօ Արմենիա»-ի բաժինը շատ հրապուրած է ֆրանսացիները:

Ան յայտնեց, որ հաւանաբար սեպտեմբերին կամ հոկտեմբերին լոյս տեսնէ գիրքին անգլերէն թարգմանութիւնը, իսկ հաւանաբար 2017-ի սկիզբը լոյս տեսնէ արեւմտահայերէն թարգմանութիւնը, ապա կը նախատեսուի նաեւ դասական ուղղազրույթեամբ արեւելահայերէն թարգմանութիւն մը:

Խօսելով ապագայի ծրագիրներուն մասին՝ Գրիգորեան յայտնեց, որ իր յաջորդ գիրքը պիտի ըլլայ 1905-1921 երկարող ժամանակաշրջանին մասին եւ դարձեալ պիտի գրէ վէպի ոճով: Նոր գիրքին առանցքը պիտի ըլլան երեք անձեր՝ Ստեփան Զօրեան (Ռոստոմ), Արամ Մանուկեան եւ Ռուբէն Տէր Մինասեան:

ԱՆՆՈՒՄ

Վիեննան Վերահաստատեց 94-ի Համաձայնագիրը

Արցախեան հակամարտութեան վերջին իրադարձութիւններու քննարկման յատկացուած Վիեննայի հանդիպման մասնակիցներու ձեւաչափը արտակարգ է: Հանդիպումը ո՛չ միջնախարարական է, ո՛չ միջնախագահական, ո՛չ ալ կողմերու նախագահներու եւ նախարարներու եւ ԵԱՀԿ Մինսքի խմբակի միջնորդներու մակարդակով միայն: Մասնակիցներու շարքը չէ փակուած նոյնիսկ ԵԱՀԿ-ի նախագահի անձնական ներկայացուցիչով:

Միացեալ Նահանգներու եւ Ռուսիոյ արտաքին գործոց նախարարներն ու Ֆրանսայի եւրոպական հարցերու պետական նախարարը համալրած են մասնակիցներու շարքը՝ Վիեննայի հանդիպումին տալով արտակարգ ձեւաչափի տարագ:

Արտակարգ ձեւաչափը կը նշանակէ արտակարգ իրավիճակէ բխած անհրաժեշտութիւն՝ կարգաւորման համար հիմնական որոշում կայացնելու տպաւորութիւնը ձգելով: Պարզ հայեացքով հակամարտութեան ներկայ փուլը իր վրայ կեդրոնացուցած է աշխարհաքաղաքական ուժերու ուշադրութիւնը:

Մասնակիցներու արտակարգ պատկերին մէջ պէտք է կեդրոնանալ ֆրանսացի բարձրաստիճան պաշտօնատարի ներկայութեան վրայ. ան էր, որ Ֆրանսայի Ազգային ժողովի արցախեան պատերազմին յատկացուած լսումներուն ընթացքին լուծման սկզբունքները ներկայացնելով յատկապէս շեշտեց ազգերու ինքնորոշման իրաւունքը:

Պաշտօնական լրահոսը նկատի ունենալով փորձենք ամփոփել այն հիմնական կէտերը, որոնք Վիեննան որոշած է յետապրիլեան պատերազմի անմիջական ժամանակահատուածին:

Ա. Քննարկուած են արցախեան հակամարտութեան գօտիին վրայ ապրիլի սկիզբը կատարուած հրադադարի կոպիտ խախտումին պատճառով ստեղծուած լարուած իրավիճակը եւ անկէ դուրս գալու հաւանական ուղիները:

Բ. Համանախագահող երկիրները շեշտած են 94-ի եւ 95-ի համաձայնագիրները յարգելու եւ անոնց իրականացումէն չշեղելու անհրաժեշտութիւնը:

Գ. Համաձայնութիւն գոյացած է քայլերու ձեռնարկելու մշտադիտարկման եւ միջադէպերու հետաքննութեան մեքանիզմի հաստատման եւ ԵԱՀԿ-ի գործող նախագահի անձնական ներկայացուցիչի կարողութիւններու յաւելման հակամարտութեան կարգաւորման ուղղութեամբ բանակցութիւններու հաւանական վերսկսման համար:

Առաջին հայեացքով այստեղ հասցեական յայտարարություններ չեն հնչած. եւ իբրեւ անոր հետեւութիւն չկայ նաեւ որեւէ իրաւադրոյթ, որ պատասխանատուութեան ենթարկէ նախայարձակը, միջազգային երաշխաւորութիւն ունեցող հրադարար անվերջ խախտողը: Սակայն կարելի չէ չնկատել այստեղ հայկական կողմի ձեռք ձգած առաւելը՝ 94-ի զինադուլը բանակցութիւններուն մեկնարկ, եւ զինադուլի հաստատման միջազգային համաձայնագիր նկատելու. իրականութիւն մը, որ մնայուն կերպով անուշադրութեան կը մատնուէր Պաքուի կողմէ: Թէ՛ 94-ը եւ թէ՛ 95-ը միջազգային համաձայնագիրներ են. եւ միջազգային այդ համաձայնագիրներուն մաս կազմած է Ստեփանակերտը: Հիմա ալ Վիեննան յետապրիլեան ժամանակահատուածը քննարկելու եւ լարուած իրավիճակէն դորս գալու համար կը վերաամրագրէ այն, որուն յղում կը կատարէր հայկական կողմը եւ այն, ինչէն կ'ուզէր խուսափիլ ազրպէյճանականը:

Եթէ առաջին եւ երկրորդ կէտերը հաստատումներ են եւ գնահատականներ, ապա երրորդը ուղղակի համաձայնութիւն է: Այս առաջադրանքը հայկական կողմինն էր եւ դարձեալ անուղղակի մերժումը Պաքուի կողմէն: Այստեղ խնդիրը ոչ միայն մշտադիտարկումներու արդիական սարքերով իմանալն է, թէ ո՛վ է նախայարձակը, թէ ո՛վ է հրադարար խախտողն ու դիպուկահարը եւ ո՛վ պատասխան տուողը, այլ շփման գօտիին վրայ երկարաժամկետ եւ համապարփակ դիտորդական առաքելութեան մասին է խօսքը:

Ապրիլեան ռազմական արկածախնդրութեամբ Պաքուն յանգեցաւ ԵԱՀԿ-ի ձեւաչափին անփոփոխելիութեան եւ անոր հաստատման արտակարգ բնոյթի մասնակցութեան: 94-ի զինադուլի վերաամրագրման, ուր Ստեփանակերտը միջազգային ընտանիքին կողմէ կ'ընդունուի իբրեւ համաձայնագիրի անկախ կողմ:

Եւ այսօրուան սահմաններուն վրայ մշտադիտարկման սարքաւորումներու հաստատման: Հասկնալի է, որ մշտադիտարկումը չէ որ միջազգային ընտանիքը պիտի համոզէ նախայարձակի դիմագիծին մասին, այսուհանդերձ փաստերը արձանագրելու եւ ի պահանջեալ հարկին պատասխանատուութիւնները մատնացոյց ընելու առումով նկատառելի դրութիւն է:

Վիեննայով ԵԱՀԿ-ի գործող նախագահին անձնական ներկայացուցիչին գործունէութեան լիազօրութիւններուն ընդլայնման որոշում տրուած է: Այս մէկը եւս հարցի լուծման հարթութիւնը կ'ամրապնդէ ԵԱՀԿ-ի շրջանակներուն մէջ: Բան մը, որ մնայուն կերպով կ'ուզէր տեղափոխել Պաքուն: Վիեննան վերահաստատեց 94-ի առանցքը: Այլ խօսքով՝ համաձայնագիրներուն Ստեփանակերտի մասնակցութեան ընդունումը:

«Ա.»

ԼՈՒՐԵՐ ԳԱՂՈՒԹՆԵՐԷՆ

**Բարգէն Արք. Չարեան Ընտրուեցաւ
Քանատայի Հայոց Թեմի Առաջնորդ**



Քանատայի Հայոց թեմի Ազգային երեսփոխանական ժողովը տեղի ունեցաւ Լաւալի մէջ, 13-14 Մայիս 2016-ի շաբաթավերջին, հիւրընկալութեամբ Ս. Գեորգ Հայ առաքելական եկեղեցոյ հոգեւոր հովիւին եւ հոգաբարձութեան:

Ժողովին իրենց մասնակցութիւնը բերին Քանատայի տարածքին մէջ գործող հոգեւորականները, եկեղեցիներու ազգային երեսփոխանները, Ազգային պատգամաւորները, հոգաբարձական կազմերը եւ գործակից կազմակերպութեանց ներկայացուցիչներն ու Կիլիկեան Սուրբ Աթոռի եւ առաջնորդարանի շքանշանակիրներն ու հիւրերը:

Օրակարգին մաս կը կազմէր նաեւ առաջնորդի ընտրութիւնը. քուէներու մեծամասնութեամբ Քանատայի Հայոց թեմի առաջնորդ ընտրուեցաւ Բարգէն արք. Չարեան:

Թեմակալ առաջնորդը կը ծառայէր Սպահանի Հայոց Թեմին մէջ (Նոր Ջուղա)՝ որպէս առաջնորդ:

Վանական իր ծառայութիւններուն ընթացքին (1986-1993) վարած է նաեւ Գաւազանակրութեան պաշտօն եւ եղած է անձնական քարտուղար Երջանկայիշատակ Գարեգին Բ. հայրապետին: 1993-1996 տարիներուն եղած է առաջին հոգեւոր հովիւը Արաբական Միացեալ Էմիրութեանց: 1996-2002 տարիներուն ծառայած է Միացեալ Նահանգներու Արեւմտեան թեմէն ներս, իբրեւ հոգեւոր հովիւ Սան Ֆրանսիսքոյի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցոյ:

2002-2004 սեպտեմբեր, ծառայած է Բերիոյ Թեմէն ներս (Սուրիա), իբրեւ Առաջնորդական փոխանորդ Ճեզիրէի:

Ապա 2004 օգոստոսին, Սպահանի թեմի Պատգամաւորական ժողովին կողմէ ընտրուած է առաջնորդական տեղապահ Սպահանի Հայոց թեմին: 28 յունուար 2005-ին կ'ընտրուի Սպահանի Հայոց թեմի առաջնորդ:

2004-2016, 12 երկար տարիներ կը վարէ Սպահանի Հայոց Թեմի եւ հարաւային իրանահայութեան առաջնորդական պաշտօնը:

Քանատայի հայոց թեմի նորընտիր առաջնորդը Մոնրէալ պիտի մեկնի Յունիսին:

Քանատայի Հայ Ղատի Ցանձնախումբը Ֆրանսայի Ղեսպանատան Մէջ



11 Մայիսին Քանատայի Հայ ղատի յանձնախումբի անդամներ Բաֆֆի Տօնապետեան եւ Գրիգոր Տէր Ղազարեան Օթթաուայի Ֆրանսայի ղեսպանատան մէջ հանդիպում ունեցան ղեսպանատան գլխաւոր գործակատար Ֆլորենս Ֆերարիի հետ:

Հանդիպման ընթացքին անոնք ներկայացուցին Հայ ղատի աշխարհատարած յանձնախումբերու միջազգային գետնի վրայ տարած աշխատանքները, նաեւ Ֆերարիի ուշադրութեան յանձնեցին Արցախի ապրիլեան պատերազմի գծով ազրպէյճանական կողմի նախայարձակ ըլլալու իրողութեան շուրջ մանրամասնութիւններ: Հայ ղատի յանձնախումբին կողմէ պահանջուեցաւ, որ Ֆրանսան իբրեւ համանախագահ Արցախի հարցով բանակցութիւններ համակարգող Մինսքի խմբակին՝ ղատապարտէ Ազրպէյճանի կողմէ զինադադարը խախտելու ընթացքը: Ներկայացուցիչները նաեւ նկատել տուին, որ յանձնախումբին մօտ բաւարար փաստեր կան, որպէսզի ապացուցուի ազրպէյճանական բանակին կողմէ Արցախի խաղաղ բնակչութեան դէմ գործադրուած սպանութեան եւ բռնութեան վայրագ դէպքերը:

Ֆլորենս Ֆերարի իր կարգին յայտնեց, թէ Մինսքի խմբակի ամերիկացի, ռուս եւ ֆրանսացի համանախագահները մօտէն կը հետեւին կացութեան եւ լուրջ աշխատանքի լծուած են իրավիճակը բնականոն իր ընթացքին վերադարձնելու ուղղութեամբ:

Հանդիպման աւարտին կողմերը պայմանաւորուեցան շարունակել համագործակցութիւնը:

Հայկական Դասական Երաժշտութեան Համերգ

Մայիս 3-ին Չինաստանի Թիանժին քաղաքին մէջ տեղի ունեցաւ հայկական դասական երաժշտութեան համերգ, որուն ընթացքին ներկայացուեցան Կոմիտասի, Սպենդիարեանի, Խաչատրեանի, Բաբաջանեանի գործերը:

«Հայաստանի գաղտնիքներ» նախագիծի ղեկավար եւ Չինաստանի Հայկական համայնքի գործադիր մարմինի ներկայացուցիչ Միքայէլ Հայրապետեան ծանօթացուց 20-րդ դարու երգահան Արօ Ստեփանեանի ստեղծագործութիւնները:

Յայտնենք, որ Չինաստանի հայկական համայնքի նորընտիր նախագահն է Միք Սահակեան: Համայնքը աշխուժ գործունէութիւն կը ծաւալէ. միաւորել Չինաստան եւ հեռաւոր Արեւելք բնակող հայերը, նպաստել հայապահպանութեան, չինացի ուսանողներուն Հայաստանի մէջ ուսանելու կրթաթոշակ յատկացնել, Չինաստանի մէջ հայկական ներկայութեան պատմութեան վերաբերեալ «Գ. Կիւլպէնկեան» հիմնադրամին հետ ուսումնասիրութիւններ կատարել, Հայ ուսանողական միութեան գործունէութիւնը ապահովել, հայ հետազօտողներու եւ ուսանողներու միջեւ առցանց զիտաժողով կազմակերպել:

Կայացաւ Համազգայինի Արեւելեան Միացեալ Նահանգներու 40-րդ Շրջանային Ժողովը

Մայիս 7-ին Ֆիլատելֆոյ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ սրահին մէջ տեղի ունեցաւ Համազգայինի Արեւելեան Միացեալ Նահանգներու 40-րդ Շրջանային ժողովը:

Ելոյթ ունեցան ՀՕՍ-ի Շրջանային վարչութեան ներկայացուցիչ Մատոնա Գիգիբեան, ՀՄԸՄ-ի Շրջանային վարչութեան ներկայացուցիչ Էլիզապէթ Տրամկոչեան, Կեդրոնական վարչութեան անդամ Հրայր Պարոնեան, որ յայտնեց, թէ անցնող տարեշրջանին շրջանէն ներս բազմաթիւ ձեռնարկներ կարելի եղած է մեծ յաջողութեամբ կազմակերպել, նաեւ՝ ՀՅԴ-ի Կեդրոնական կոմիտէի անդամ Յովսէփ Աւագեան, որ շեշտեց, թէ ՀՅԴ-ի հովանիին տակ Համազգայինի գործունէութիւնը կը շարունակուի ամենայն հեզասահութեամբ, հաստատելով, որ շրջանէն ներս նոյնքան կարեւորութիւն ունի մշակութային ներկայութիւնը: Աւագեան անդրադառնալով Արցախի կացութեան՝ շեշտեց, որ ամէն գնով պէտք է թիկունք կանգնիլ՝ օժանդակելու համար շրջանի բնակիչներուն ու պաշտպան մարտիկներուն: Այս զեկուցումէն ներշնչուած՝ ժողովականները կատարեցին սրտաբուխ նուիրատուութիւններ եւ յառաջացաւ հազար հինգ հարիւր տոլար գումար մը, որ պիտի փոխանցուի ՀՕՍ-ի Արցախի օժանդակութեան համար յատկացուած յատուկ հիմնադրամին:

Վարչութեան միամեայ գործունէութեան բարոյական եւ նիւթական տեղեկագիրներու ընթերցումէն, լուսաբանական հարցումներէն եւ քննարկումներէն ետք կատարուեցաւ նոր Շրջանային վարչութեան ընտրութիւն, որուն անդամներն են՝ Արեւիկ Գաբրիէլեան (Նիւ Եորք, ատենապետ), Անի Աղաճանեան (Ֆիլատելֆիա, ատենադպիր), Քարի Ղազարեան (Ֆիլատելֆիա, գանձապահ), Յասմիկ Աբրահամեան (Նիւ Ճրքի, փոխատենապետ), Թալին Մավլեան (Նիւ Ճրքի, խորհրդական), Նանոր Պարսումեան (Պոսթըն, խորհրդական) եւ Խաչիկ Տաքարեան (Շիքակօ, խորհրդական):

Հալէպի Պետական Համալսարանին Մէջ Մեկնարկը Կատարուեցաւ Հայոց Ցեղասպանութեան 101-ամեակի Ձեռնարկներուն



Հովանաւորութեամբ Հալէպի պետական համալսարանի կուսակցապետ տորթ. Սոհամետ Նայեֆ Մալթի, վերջերս Հալէպի Բժշկական համալսարանի «Ռազի» սրահին մէջ բացումը կատարուեցաւ Հայոց ցեղասպանութեան 101-ամեակի նուիրուած ցուցահանդէսին՝ ներկայութեամբ համալսարանի ընդհանուր տնօրէն Մուսթաֆա Աֆիունիի, Բերիոյ հայոց թեմի առաջնորդ Շահան արք. Մարգիսեանի, կաթողիկէ առաջնորդ հայոց Պետրոս արք. Միրիաթեանի եւ Սուրիոյ խորհրդարանի նորընտիր երեսփոխան Ժիրայր Ռէլիսեանի:

Ցուցահանդէսին յաջորդեց բեմադրիչ Նաճտաթ Անգուրի «Ֆանիյա ուա թաթապատտատ» ժապաւենի ցուցադրութիւնը:

ԱՅԼԱԶԱՆ

10 Ազդանշան, Որոնք Կը Վկայեն Ջուրի Պակասը Մեր Մարմնին Մէջ

Մեր մկաններն ու երիկամները 73 առ հարիւր բաղկացած են ջուրէ, արիւնը՝ 83 առ հարիւր, թոքերը՝ 90 առ հարիւր, իսկ ուղեղը՝ 76 առ հարիւր:

Մեր մարմինը ջուր կը կորսնցնէ մէզի եւ քրտինքի ճամբով. իսկ այդ պակասը ամբողջացնելու միակ եւ լաւագոյն միջոցը օրական միջին հաշուով 2 լիթր ջուր խմելն է:

Մարմնի ջրազրկումը կը դրսեւորուի հետեւեալ ախտանշաններով.

- 1 -

Մութ Գոյնի Մէզ

Մութ գոյնի մէզը առաջին ախտանշաններէն մէկն է, որ կը վկայէ մարմնին մէջ ջուրի անբաւարար քանակին մասին: Մէզը կրնայ մութ գոյն ունենալ նաեւ որոշ դեղերու, Պէ. խումբի կենսասնիթերու, ճակնդեղի, ծնեբեկի եւ այլ ուտելիքներու օգտագործման պարագային:

- 2 -

Մէզի Քանակի Կրճատում

Մարդոց մեծամասնութեան մօտ միզարձակումը 24 ժամուան ընթացքին կրնայ 6-7 անգամ ըլլալ: Իսկ եթէ տուեալ անձը քիչ հեղուկ խմէ, ինքնաբերաբար միզարձակման յաճախականութիւնը կը նուազի:

- 3 -

Պնդութիւն

Ջրազրկումը պնդութեան գլխաւոր պատճառներէն մէկն է: Հաստ աղիքին մէջ բաւարար քանակութեամբ հեղուկը մեծապէս կ'օգնէ աղիքներուն բնականոն աշխատանքին:

Պնդութեան կանխարգիլման եւ բուժման համար բաւարար ջուր եւ բջջանիւթ պէտք է օգտագործել, իսկ ասոնք առկայ են սովորական ջուրին, պտուղներուն եւ բանջարեղէններուն մէջ:

- 4 -

Չոր Մորթ Եւ Աւելի Շեշտուած Կնճիոներ

Մասնագէտներու կարծիքով, ջրազրկումը կրնայ մորթի գրգռման, բորբոքման եւ քարի պատճառ դառնալ: Աւելի ծանր պարագաներու, մորթը կրնայ թեփոտիլ, կարմրիլ եւ այլն... Երբ մորթը կը կորսնցնէ իր խոնաւութիւնը, բջիջները կը մեռնին, եւ ավելի խոր ընդգծուած բջիջներ կը յայտնուին:

- 5 -

Անօթութիւն Եւ Գիրութիւն

Մարդու մարմինը շատ խելացի է, բայց դժբախտաբար չի գանազաներ անօթութեան եւ ծարաւի տարբերութիւնը: Հիփոթալամիւսը ուղեղին այն հատուածն է, որ պատասխանատու է անօթութեան եւ ծարաւի կարգաւորման: Եթէ անօթութեան զգացում յառաջանայ, որեւէ բան ուտելէ առաջ նախընտրելի է նախ բաժակ մը ջուր խմել, 10-15 վայրկեան սպասել եւ յետոյ ուտել. այսպիսով ուտելիքին քանակը զգալիօրէն կը պակսի:

– 6 –

Ծարաւի Եւ Բերնի Չորացումի Չզացում

Ծարաւի զգացողութիւնը արդէն իսկ կը վկայէ մարմնին մէջ թեթեւ ջրազրկման մը մասին: Բերնի չորացումը ծարաւի հետեւանք է եւ կը վկայէ, որ մարմնին յորձաթաղանթներուն խոնաւութիւն անհրաժեշտ է:



– 7 –

Գլխացաւ

Երբ մարդ քիչ ջուր կը խմէ, մարմինը կը փորձէ պահպանել ու կլանել ջուրը բոլոր հիւսկէններէն, որպէսզի կարենայ փոխհատուցել օգտագործուող հեղուկին բացակայութիւնը: Այդ պատճառով ուղեղին հիւսկէնները եւս կը կորսնցնեն իրենց խոնաւութեան մէկ մասը եւ կը կծկուին՝ հեռանալով գանկէն, ինչ որ պատճառ կը դառնայ գլխացաւի:

– 8 –

Յոգնածութիւն

Բժշկական հետազօտութիւններու համաձայն, չափազանցուած ջրազրկումը կրնայ պատճառել յոգնածութիւն, թուլութիւն եւ աշխուժութեան նուազում:

– 9 –

Յօդացաւ

Ջուրը յօդերուն համար իրատեսակ «քսուք» է, անհկա կ'օգնէ ոսկորներուն սահիլ իրարու վրայով. երբ մարմինը բաւարար ջուր չի ստանար, յօդերը իրենց կարգին կը տուժեն, ուրկէ յօդացաւ յառաջ կու գայ:

– 10 –

Դիմադրականութեան Տկարացում


Ջրազրկումը կը բարձրացնէ արեան մէջ թունաւոր նիւթերու տոկոսը, ինչ որ կը վնասէ դիմադրականութեան համակարգին: Շատեր կը կարծեն, որ բոլոր հեղուկները խոնաւութիւն կ'ապահովեն մարմնին. սակայն սխալ կարծիք է: Որոշ ըմպելիներ, ինչպէս, օրինակ, սուրճը եւ որոշ հիւթեր, կը ջրազրկեն մարմինը՝ քաֆէինի եւ շաքարի քանակին պատճառով:

Պ. ԴՈՒՐԵԱՆԻ ԾՆՆԴԵԱՆ 165 ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ

Այսօր Պ. Դուրեանի ծննդեան տօնն է:

Ծնած էր 20 Մայիս 1851-ին, Պոլսոյ Սկիւտար թաղամասը, երկաթագործ Զմպայեանի աղքատ յարկին տակ: Հօրենական ազգանունին հայացումով էր, որ Պետրոս Դուրեան գրչանունով ան ստորագրեց, հազիւ 13 տարեկանին, իր գրած առաջին բանաստեղծութիւնը:

Կեանքը դաժան գտնուեցաւ բնատուր տաղանդով օժտուած այս պատանիին նկատմամբ: Աղքատութեան մէջ մեծնալով՝ չկրցաւ ուսման իր ծարար յագեցնել եւ պատանի տարիքէն աշխատանքի ասպարէզ նետուեցաւ՝ ընտանիքին կարիքները հոգալու պարտաւորութեամբ:



Դուրեանի տիրական յատկանիշը իր «ես»-ն է պայքարը ինքզինք իրականացնելու, արժեցնելու, ապրելու ու տիրական դառնալու: Ինք գիտակից էր իր ձիրքերուն ու արժանիքին: Կը սիրէր փառքն ու փառաւորուիլը, եւ կ'ակնկալէր, որ իր շուրջինները գնահատեն զինք: Յոխորտ էր ան եւ կեանքի ու մահուան միջեւ մղած իր անհաւասար պայքարին մէջ տեսակ մը հաշիւ կը պահանջէր «ոխերիմ» Աստուծմէ: Իր վերջին ամիսներուն ան արդէն ինքզինք վերացած զգաց այս աշխարհէն ու իր շուրջը դիտեց վերացական աչքերով: Գութ չէր ուզեր ան, այլ՝ ապրելու իրաւունքին ճանաչումը:

Դուրեանի կեանքին մէջ մտան մէկէ աւելի աղօջիկներ, առնուազն՝ երկուքը ծանօթ: Մին ճանչցաւ, երբ տակաւին աշակերտ էր ու փոխադարձութիւն գտաւ: Սակայն աղջկան ծնողները խորտակեցին անոր սերը՝ ընկերային դիրքի տարբերութիւն տեսնելով իրենց ու Պետրոսի միջեւ, ինչ որ պատճառ եղաւ աղջկան մահուան: Երկրորդը Վարդովեանի խումբին մէջ աշխատող Պիստոս-Արաքսիա դերասանուհին էր, ծագումով յոյն, որ նախ յոյս ներշնչեց Դուրեանին, սակայն յետոյ դրժեց: Դուրեան մեզ թողուց 40 տաղեր, 13 նամակներ ու 11 ողբերգութիւններ: Իր ձեռագիրներէն ոմանք կորսուած են, ինչպէս՝ իր ինքնակենսագրական վէպը, «Վոսփորի գիշերներ»: Գրաբարով յագեցած շրջանի մը ան կարողացաւ գործածել զուտ աշխարհաբար:

Թէեւ կեանքը անողոք գտնուեցաւ հայ գրականութեան Հանճարեղ Պատանիին նկատմամբ, բայց մեր ժողովուրդը անմահութեան արժանացուց Պետրոս Դուրեանը:

Ինչպէս որ Հրաչ Տասնապետեան վկայած է՝

«Քսանմէկ տարեկանին մեռած այս հանճարեղ պատանին երեւոյթ մըն է ոչ միայն հայ, այլ բոլոր գրականութեանց պատմութեան մէջ: Ան է, որ մեր մէջ հիմը դրաւ աշխարհաբար քնարերգակ բանաստեղծութեան, իր ներշնչման խորութեամբը, անկեղծութեամբն ու արտայայտուելու եղանակովը հասնելով քիչ անգամ հաւասարուող բարձրութեան մը»:

Յիշատակդ անթառամ մնայ արեւմտահայ քերթողութեան ծաղկավէտ բարձունք:

WWW.AZTARAR.COM